ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ Կորյուն Սամսոնյանի կողմից 2024 թվականի մարտի 13-ից 2024 թվականի սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հանդիսանալով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- պատրաստել և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցման եմ ներկայացրել Տեսչական մարմնի ղեկավարի, նրա տեղակալների և Տեսչական մարմնի մյուս աշխատակիցների՝ արտասահման գործուղման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները,
- կազմել եմ Տեսչական մարմնի ղեկավարի, նրա տեղակալների արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունները,
- Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բեռների ուղեկցող անասնաբուժական առողջության և բուսասանիտարական վկայականների իսկությունը ճշտելու նպատակով հարցում եմ կատարել մի շարք երկրների լիազոր մարմիններ (Իրան, Իրաք, Քուվեյթ, Քաթար, Լեհաստան, Ռումինիա, Ուկրաինա, Կանադա, ՌԴ և այլն),
- այլ պետություններից Հայաստանի Հանրապետություն սննդամթերք, բուսական և կենդանական ծագման արտադրանք արտահանող մի շարք

կազմակերպությունների վերաբերյալ թարմացված տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում եմ իրականացրել տարբեր երկրներ,

- Հայաստանի Հանրապետությունից ԱՄՆ թարմ ծիրանի և դեղձի, ինչպես նաև մսամթերքի արտահանման թույլտվություններ ստանալու նպատակով հարցում եմ իրականացրել ԱՄՆ գյուղդեպարտամենտ, ստացված պահանջները (հարցաշարերի տեսքով) ներքին շրջանառության եմ ուղարկել Տեսչական մարմնի համապատասխան ստորաբաժանումներին ու Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և ստացված դիրքորոշումները ամփոփելուց և անգլերեն լեզվով թարգմանելուց հետո տրամադրել եմ ամերիկյան կողմին,
- ստացված հարցուներին ի պատասխան սահմանված կարգով տրամադրել եմ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ներմուծման պահանջները, առողջության վկայականների նմուշները, ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից այլ երկրներ արտահանվող անձնական օգտագործման կենդանիների (շուն, կատու, թութակ և այլն) տեղափոխման պահանջները,
- Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ տեսչական ստուգումների կարգի միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով հարցում եմ կատարել ավելի քան 20 պետություններ, որոնցից ստացված տեղեկատվության ամփոփման արդյունքում օրենսդրական փոփոխություն իրականացնելու նպատակով գրությամ դիմել ենք Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ՝ հետագա ընթացքը ապահովելու համար,
- Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ կարանտին վնասատուների դեմ պայքարում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով հարցում եմ կատարել ավելի քան 30 պետություններ, որոնցից ստացված ամփոփ տեղեկատվությունը տրամադրվել է Տեսչական մարմնի ղեկավարին,

- Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ սահմանային պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող սննդամթերք (բուսական և կենդանական ծագման) փոխադրող մեքենաների ստուգման կարգի միջազգային փորձը ուսումնասիրելու նպատակով հարցում եմ կատարել շուրջ 25 պետություններ, որոնցից ստացված ամփոփ տեղեկատվությունը տրամադրվել է Տեսչական մարմնի ղեկավարին,
- «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով և աշխատանքային էլեկտրոնային փոստով բաժնի պետի հանձնարարությամբ կազմել եմ գրություններ (արտաքին և ներքին շրջանառության), պատրաստել եմ պատասխան գրություններ ինչպես ռուսերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով՝ ուղղված տարբեր երկրների անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության ոլորտի լիազոր մարմիններին, ներմուծմամբ և արտահանմամբ զբաղվող տեղական և արտասահմանյան կազմակերպություններին,
- բաժնի պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ Կորյուն Սամսոնյան

13 սեպտեմբերի 2024թ.